Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/11-1

ք. Գավառ «19» մարտի 2020թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և "Սմարթլայն" ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1567410/մեկ միլիոն հինգ հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր տասը/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	"Սմարթլայն" ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,	Ք.Երևան,Վարդանանց 110
Կենտրոնական Հրապարակ 7	ՀՎՀՀ 01548908
ՀՎՀՀ 08404767	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150009537660100
Գործառնական վարչություն	Տնօրեն՝
Հ/Հ 90017107[illegible]	---------- Գ.Հայրիբյան
Գլխավոր քարտուղար	Մ.Տ.
Ա.Հարությունյան	
Մ.Տ.	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 19 » մարտի 2020 թ. կնքված
N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/11-1 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	30192121/1	գրիչ գնդիկավոր PEN	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գնդիկավոր գրիչ, 1.0 մմ ծայրերով, կափարիչով (գրպանին ամրացնելու ամրակով), ներքևից կամ վերևից բացվող (միջուկը փոխելու համար), գրիչի երկարությունը առնվազն 140մմ,պատյանով, միջուկի թանաքի լցված մասը առնվազն 95մմ, թանաքի գույնը՝ կապույտ	հատ	55	44000	800	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	800	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը:*
2	30192128/1	գրիչ գելային Skyglory	AL PASSO GENERAL TRADING CO LLC	Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, գելային	հատ	70	17500	250	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	250	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*
3	30192160/1	Շտրիխներ Correction Fluid	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Սպիտակ գույնի, նախատեսված տեքստեր մաքրելու (ծածկելու) համար, 12 մլ տարողությամբ սրվակ՝ վրձինով, ջրային հիմքով կամ այլ օրգանական լուծիչով, արագ չոչացող:	հատ	145	14500	100	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	100	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*
4	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյ	AL PASSO GENERAL TRADING CO LLC	Չոր սոսինձ՝ գրասենյակային	հատ	80	8000	100	Գեղարքունիքի մարզ,	100	*Մատակարարման վերջնաժամ*

		ակային Glue Stick		(սոսնձամատիտ). թուղթ սոսնձելու համար 8 գր:					ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7		մկեզը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը
5	30192720/1	Գծանշիչ Skiglory	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով	հատ	98	14700	150	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	150	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ դեկտեմբերի 25-ը
6	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ Impulse	AL PASSO GENERAL TRADING CO LLC	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն, թաղանթի հաստությունը՝ առնվազն 50 միկրոն:	հատ	9	82800	9200	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	9200	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը
7	30197230/1	Թղթապանակ արագակար	<<	ստվարաթղթով, արագակարով	հատ	60	12000	200	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	200	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը
9	30197234/1	թղթապանակ, կոշտ կազմով Alba Rado	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով /ռեգիստր/. համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար. հաստությունը՝ 7-8սմ:	հատ	550	22000	40	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	40	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը
10	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթի համար Starlep	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային կարիչ 50 թերթից ավելի մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	2500	12500	5	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	5	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը
11	30197622/1	թուղթ, A4 ֆորմատի Captain	Ինթերնեյշնլ փեյփեր	Թուղթ՝սպառողական A4 ձևաչափի (210X297մմ). ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու եւ	կգ	598	1076400	1800	Գեղարք ունիքի մարզ, ք Գավառ Կենտրոնական հրապարակ 7	1800	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի

				գրասենյակայի ն աշխատանքնե րի համար՝ 1մ2 մակերեսով թղթի զանգվածը՝ 80 գ, սպիտակությու նը՝ առնվազն՝ 90%, փաթեթավորմ ամբ, տուփում՝ 500 թերթ							*րի 25-ը*
12	30199230/1	Նամակի ծրար, A5 ձևաչափի Envelope	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Ծրար սպիտակ (162x230)մմ A5 ձևաչափի թղթի համար,90% սպիտակությու ն 100գ/մ2 խտությամբ, օֆսեթային թղթից,ինքնաս ոսնձվող, առանց գրությունների:	հատ	20	10000	500	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավա ռ Կենտրոն ական հրապար ակ 7	500	*Մատակար արման վերջնաժա մկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբե ր ի 25-ը*
13	30199232/1	Նամակի ծրար, A4 ձևաչափի Envelope	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Ծրար սպիտակ (324x230)մմ A4 ձևաչափի թղթի համար,90% սպիտակությու ն 100գ/մ2 խտությամբ, օֆսեթային թղթից,ինքնաս ոսնձվող, առանց գրությունների:	հատ	30	7500	250	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավա ռ Կենտրոն ական հրապար ակ 7	250	*Մատակար արման վերջնաժա մկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբե ր ի 25-ը*
14	30199430/1	թուղթ նշումների տրցակնե րով Memo Paper	AL PASSO GENERAL TRADING CO LLC	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությու նը 75%-ից ոչ պակաս, ԳՕՍ 18510-87 կամ համարժեք, փաթեթավորու մը՝ ցանկացած տեսքով, 100 թերթ: չափեր 76.2x76.2մմ գունավոր Fantastic ֆիրմայի կամ համարժեք	հատ	120	2400	20	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավա ռ Կենտրոն ական հրապար ակ 7	20	*Մատակար արման վերջնաժա մկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբե ր ի 25-ը*
16	39263410/1	ամրակ, փոքր Paper clip	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Ամրակ, մետաղյա, փոքր - Փոքր, գրասենյակայի ն ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, 33մմ երկարությամբ Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ : Մեկ տուփի մեջ 100 հատ:	տուփ	80	4000	50	Գեղարք ունիքի մարզ, ք.Գավա ռ Կենտրոն ական հրապար ակ 7	50	*Մատակար արման վերջնաժա մկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբե ր ի 25-ը*
17	39263420/1	ամրակ, մեծ	AL PASSO GENERAL TRADING	Գրասենյակայ ին ամրակներ՝	տուփ	220	6600	30	Գեղարք ունիքի	30	*Մատակար արման*

		Paper clip	CO.LLC	մետաղական, 50 մմ երկարությամբ. Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ. միասնական պահելու կարողությամբ, տուփում՝ առնվազն 100 հատ:					մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7		*վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ դեկտեմբերի 25-ը*
18	30141200/1	Հաշվասարք, գրասենյակային Calcut, machin	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	12 նիշանի սեղանի (21x294)չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա,ինքնալից քավորվող	հատ	1500	15000	10	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	10	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ դեկտեմբերի 25-ը*
19	30192100/1	Ռետին հասարակ Eraser	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Ռետին, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար. չափսերը առնվազն 2x4.5սմ, անհատական փաթեթավորմամբ	հատ	35	1750	50	Գեղարքունիքի մարզ, ք Գավառ Կենտրոնական հրապարակ 7	50	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*
20	30192131/1	Մեխանիկական կամ սրվող մատիտներ Skygjory	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Հասարակ, սև, կարծրությունը HB:	հատ	20	2960	148	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	148	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ դեկտեմբերի 25-ը*
21	30192135/1	Գրաֆիտե միջուկ. մատիտի համար Pencil Lead	AL PASSO GENERAL TRADING CO LLC	Հասարակ, սև, կարծրությունը HB:	տուփ	90	900	10	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	10	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*
22	30192136/1	Մատիտ, գրաֆիտե, տեղադրվող միջուկով Pencil Mechanical	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Մատիտ մեխանիկական զսպախցուկային (ցանգային) F, L, MK1 տիպերի, փոխարինվող գրիֆելի անվանական տրամաչափը՝ (0,3, 5, 0,5, 0,7, 1,0, 2,0 և 2,2) մմ, ԳՕՍՏ 19445-93 կամ համարժեք	հատ	190	1900	10	Գեղարքունիքի մարզ, ք Գավառ Կենտրոնական հրապարակ 7	10	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*
23	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր. միջին Staples	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ, 24 մմ/6 մմ, 26	տուփ	60	9000	150	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական	150	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան*

				մմ/6 մմ ·					հրապարակ 7		2020թ. դեկտեմբերի 25-ը
24	30197233/1	Թղթապանակ, թելով, թղթյա	<<	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ (Б) տիպի, թելկապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ, ԳՕՍՏ 17914-72 կամ համարժեք	հատ	70	14000	200	Գեղարքունիքի մարզ, ք Գավառ Կենտրոնական հրապարակ 7	200	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը
25	30197321/1	Կարիչ, մինչև 20 թերթի համար Stapler	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային կարիչ մինչև 20թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	400	20000	50	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	50	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը
26	30197322/1	Կարիչ, 20-50 թերթի համար Stapler	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային կարիչ 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1000	20000	20	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	20	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ դեկտեմբերի 25-ը
27	30197340/1	Ապակարիչ Remover	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար: Kangaro HD-45 ֆիրմայի կամ համարժեք:	հատ	140	2800	20	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	20	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ դեկտեմբերի 25-ը
28	30197646/1	Թուղթ, A3 ֆորմատի Pioneer	Նավիգատոր Կոմփանի	թուղթ գրելու Ա3 ( ) մմ ձևաչափի, ոչ կավճապատ: նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: N1, A դասի (կամ N 1, B դասի)սոսնձվածքը , 1.25 մմ-ից ոչ պակաս, 1 մ 2 մակերեսով թղթի զանգվածը՝ 80 ից մինչև	կգ	800	8000	10	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	10	Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը

				100գ սպիտակությունը՝ 90%-ից ոչ պակաս: փաթեթավորված կամ տուփերով՝ յուրաքանչյուրում 500 թերթ						
29	30199420/1	Թուղթ նշումների համար, սոսնձվա ծքով Memo Paper	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Թուղթ նշումների համար տրցակներով, սոսնձվածքով, դեղին, տուփի մեջ 100 հատ, 7,6X7,6 սմ չափի	հատ	120	12000	100	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	100	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*
30	30234620/1	Ֆլեշ հիշողություն, 4GB FLASH MEMORY	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	USB ինտերֆեյսը՝ USB 2.2	հատ	3000	120000	40	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	40	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*
33	39292530/1	Քանոն՝ մետաղյա Ruler	AL PASSO GENERAL TRADING CO.LLC	Ուղիղ քանոն, գծաբաժանումներով, 30սմ երկարության, մետաղյա: Ապրանքի մատակարարումը մինչև Պատվիրատուի պահեստային տնտեսություն /Մայաթ-Նովա 1ա/ կատարում է վաճառողը:	հատ	140	4200	30	Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Կենտրոնական հրապարակ 7	30	*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը*

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

***Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ 900171078299
Գլխավոր քարտուղար [illegible]
Ս. Դավթյան

ՎԱՃԱՌՈՂ

''Սմարթլայն'' ՍՊԸ
Ք.Երևան,Վարդանանց 110
ՀՎՀՀ 01548908
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
Տնօրեն [illegible] Նարիբյան

Հավելված N 2
« 19 » մարտի 2020 թ. կնքված
N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/11-1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192121/1	գրիչ գնդիկավոր			4400	15400	15400	15400	26400	26400	26400	44000	44000	44000	44000
2	30192128/1	գրիչ գելային			1750	6125	6125	6125	10500	10500	10500	17500	17500	17500	17500
3	30192160/1	Շտրիխներ			1450	5075	5075	5075	8700	8700	8700	14500	14500	14500	14500
4	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային			800	2800	2800	2800	4800	4800	4800	8000	8000	8000	8000
5	30192720/1	Գծանշիչ			1470	5145	5145	5145	8820	8820	8820	14700	14700	14700	14700
6	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ			8280	28980	28980	28980	49680	49680	49680	82800	82800	82800	82800

7	30197230/1	Թղթապանակ արագակար			1200	4200	4200	4200	7200	7200	7200	12000	12000	12000	12000
9	30197234/1	թղթապանակ, կոշտ կազմով			2200	7700	7700	7700	13200	13200	13200	22000	22000	22000	22000
10	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթի համար			1250	4375	4375	4375	7500	7500	7500	12500	12500	12500	12500
11	30197622/1	թուղթ, A4 ֆորմատի			107640	376740	376740	376740	645840	645840	645840	1076400	1076400	1076400	1076400
12	30199230/1	նամակի ծրար, A5 ձևաչափի			1000	3500	3500	3500	6000	6000	6000	10000	10000	10000	10000
13	30199232/1	նամակի ծրար, A4 ձևաչափի			750	2625	2625	2625	4500	4500	4500	7500	7500	7500	7500
14	30199430/1	թուղթ նշումների, տրցակներով			240	840	840	840	1440	1440	1440	2400	2400	2400	2400
16	39263410/1	ամրակ, փոքր			400	1400	1400	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000
17	39263420/1	ամրակ, մեծ			660	2310	2310	2310	3960	3960	3960	6600	6600	6600	6600
18	30141200/1	Հաշվասարք, գրասենյակային			1500	5250	5250	5250	9000	9000	9000	15000	15000	15000	15000

19	30192100/1	Ռետին հասարակ			175	612.5	612.5	612.5	1050	1050	1050	1750	1750	1750	1750
20	30192131/1	Մեխանիկական կամ սրվող մատիտներ			295	1036	1036	1036	1776	1776	1776	2960	2960	2960	2960
21	30192135/1	Գրաֆիտե միջուկ, մատիտի համար			90	315	315	315	540	540	540	900	900	900	900
22	30192136/1	Մատիտ, գրաֆիտե, տեղադրվող միջուկով			190	665	665	665	1140	1140	1140	1900	1900	1900	1900
23	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին			900	3150	3150	3150	5400	5400	5400	9000	9000	9000	9000
24	30197233/1	Թղթապանակ, թելով, թղթյա			1400	4900	4900	4900	8400	8400	8400	14000	14000	14000	14000
25	30197321/1	Կարիչ, մինչև 20 թերթի համար			2000	7000	7000	7000	12000	12000	12000	20000	20000	20000	20000
26	30197322/1	Կարիչ, 20-50 թերթի համար			2000	7000	7000	7000	12000	12000	12000	20000	20000	20000	20000
27	30197340/1	Ապակարիչ			280	980	980	980	1680	1680	1680	2800	2800	2800	2800
28	30197646/1	Թուղթ, A3 ֆորմատի			800	2800	2800	2800	4800	4800	4800	8000	8000	8000	8000

29	30199420/1	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով			1200	4200	4200	4200	7200	7200	7200	12000	12000	12000	12000
30	30234620/1	Ֆլեշ հիշողություն, 4GB			12000	42000	42000	42000	72000	72000	72000	120000	120000	120000	120000
33	39292530/1	Քանոն՝ մետաղյա Ruler			420	1470	1470	1470	2520	2520	2520	4200	4200	4200	4200
Ընդամենը					156741	548593.5	54859.5	548593.5	940446	940446	940446	1567410	1567410	1567410	1567410

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
Բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
Հ/Հ 900171076299
Գլխավոր քարտուղար

ՎԱՃԱՌՈՂ

''Սմարթլայն'' ՍՊԸ
Ք.Երևան,Վարդանանց 110
ՀՎՀՀ 01548908
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
Տնօրեն Ս.Ղարիբյան

Հավելված N 3
« 19 » մարտի 2020 թ. կնքված
N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/11-1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 19 » մարտի 2020 թ. կնքված
N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/11-1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն